

ՕՕՕՕՕՕ, ՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ «ՕՕՕՕՕՕՕՕՕ» ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ  
**18-ՕՕ**, ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ... ՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ «ՕՕՕՕՕՕՕՕ» ՕՕՕՕՕՕՕ -ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ **2013** ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ  
ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ

Նորընծա «Կամուրջ»-2013-ը, ինչպես միշտ, իր «Արձակ եւ չափածո էջեր» շարքում միավորել է Կրաստանի հայ գրական դաշտի ներկայացուցիչներին: Եվ ոչ միայն նրանց: Գրքի՝ «Օտարագիր, բայց ոչ օտար», «Մեր հայրենակիցները Հայաստանում եւ սփյուռքում», «Գրական միջօրեականներ» խորագրերի էջերում տեղ են գտել Հայաստանում, սփյուռքում ստեղծագործող եւ՝ Կրաստանի օտարագիր հայ հեղինակներ:

Տարեցտարի իր բովանդակությունն ընդլայնող տարեգրքի վերջին համարը ունի «Ղասական էջեր», «Գրականագիտություն», «Մանկական գրականություն», «Հրապարակագրություն», «Թերթելով «Կամուրջի» արխիվը», «Կամուրջի» հարցազրույցը», «Ուսունասիրություններ, հետազոտություններ» եւ այլ շարքեր: Իսկ ավանդական՝ «Վրաց ժամանակակից արձակի եւ պոեզիայի վապետներ», «Թարգմանական էջեր» խորագրերի ներքո տեղ գտած հեղինակների միջոցով՝ ընթերցողը հաղորդակցվում է վրաց հեղինակներին: Վերջին տարիների գրական առավել նշանակալի իրադարձությունները «Կամուրջ»-2013-ը վեր է հանել «Հայ գրատպությունը 500 տարեկան է», «Սայաթնոյան սրահ» խորագրերով: «Գրքի ամենաողջունելի» «Առաջին անգամ «Կամուրջում» խորագիրը, այս անգամ եւս, իր գիրկն է ընդունել վիրահայ երիտասարդ ստեղծագործողին:

Այս ամենով հանդերձ, ի պատասխան հարցի, թե այսօր ո՞րն է տարեգրքի նպատակը, գրքի խմբագիր, բանաստեղծ, թարգմանիչ, «Կամուրջ» գրական-հասարակական կազմակերպության ղեկավար Անահիտ Բոստանջյանն առաջաբանում նշում է. «Վերջին տարիներին մեր խնդիրն է վիրահայոց առանցքի շուրջ համախմբել ամենայն հայոց գրականության ուժերը... Մեր խնդիրը նաեւ իսկական ընթերցող դաստիարակելն է...»:

Երեկոն վարող Անահիտ Բոստանջյանն իր ողջույնի խոսքում անդրադարձավ տարեգրքի անցած, հաճախ դժվարահարթ ճանապարհին եւ՝ այդ ճանապարհին որդեգրած՝ «հայ-վրաց գրականությունների երթելեկը պահպանելու» նրա անշեղ հավատամքին, իր շնորհակալությունը բերեց գրքի հովանավորողներին:

Երեկոյին ներկա հյուրեր՝ ՎԳՄ-ի նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, գրող Ռեւազ Միշվելաձեն, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Կրաստան» թերթի խմբագիր Վան Բայբությանը, Կրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնիսյանը, գրող, նկարիչ Ռեզո Ադամիան, «Ցիսկարի» հանդեսի գլխավոր խմբագիր Բաղաթեր Արաբուլին, մանկավարժ Մանանա Կարապետյանը, Կրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտյոմ Կիրակոզովը եւ երեկոն իր օրհնությամբ եզրափակող, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, իրենց շնորհավորական խոսքում, նշեցին «Կամուրջ» ավանախի մեծագույն դերը՝ վիրահայ գրական ավանդների պահպանման, գրական նոր սերունդ աճեցնելու գործում եւ այդ ուղղությամբ՝ նրա ներկայիս խմբագիր Անահիտ Բոստանջյանի ներդրած վաստակը:

Երեկոյին ներկա էր Կրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը՝ տիկնոջ եւ հնգամյա որդու՝ Ալեքսանդրի հետ:

ՎԳՄ-ի մրցանակային հանձնաժողովի որոշմամբ՝ Անահիտ Բոստանջյանին շնորհվեց Նիկո Նիկոլաձեի անվան մրցանակ՝ «Կամուրջ» տարեգրքի խմբագրման համար:  
Երեկոն համեմվեց երաժիշտ-դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Եսայի Աբովյանի՝ Բուլախովի եւ Ֆոմինի ռոմանսների սեփական մշակումների, վիրահայ երգիչներ Աննա Պողոսովայի, Հենրիխ Պետրոսյանի ու Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի աշակերտներ Լիզա Թորոսյանի եւ Լիկա Մարգարյանի գեղարվեստական ելույթներով:

□□□□□□□□ □□□□□□□□